ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1
07.11.2018թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/15Շ-2 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «20» դեկտեմբերի 2018թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԼՈՌԻ ՃՇՇ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Վարդանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, և հիմք ընդունելով Կողմերի միջև 07.11.2018թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/15Շ-2 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը համաձայնվեցին.

Կասեցնել պայմանագրի կատարման ժամկետը մինչև 2019թ. մայիսի 31-ը:

Սահմանել աշխատանքների կատարման նոր ժամկետ, սկիզբը հաշվելով 2019թ. մայիսի 31-ից սկսած՝ 30 օրացուցային օր:

1.1 Լրացնել պայմանագրում 5.1.1 կետը հետևյալ խմբագրմամբ <<Պայմանագրի գնից՝ մինչև 69 266 000 (վաթսունիններ միլիոն երկու հարյուր վաթսունվեց հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:
Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

1.2 Հաստատել Համաձայնագրի 2019թ.-ին իրականացվելիք աշխատանքների օրացուցային գրաֆիկը համաձայն հավելված 2-ի (կցվում է):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության
ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02565518
ՀՀ 90001020250
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԼՈՌԻ ՃՇՇ» ՓԲԸ
Ք. Վանաձոր, Շիրակի խճ 6
«Էվոկաբանկ» ՍՊԸ
ՀՎՀՀ 07300325
ՀՀ 16600302000042500
/ստորագրություն/
Կ.Տ

Հաստատված է
N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/15Շ-2 գնման պայմանագրի
«20» դեկտեմբերի 2018թ. կնքված
թիվ 1 Համաձայնագրով

ՀԱՎԵԼՎԱԾ թիվ 2

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
Ընդհանուր աշխատանքներ		2019թ. Մայիսի 31	2019թ. մայիսի 31-ից սկսած՝ 30 օրացուցային օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության
ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02565518
ՀՀ 90001162028

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԼՈՌԻ ՃՇՇ» ՓԲԸ
Ք. Վանաձոր, Շիրակի խճ 6
«Էվոկաբանկ» ՍՊԸ
ՀՎՀՀ 07300325
ՀՀ 16600302000425 00

/ստորագրություն/
Կ.Տ